րի հետ. վերջինի մասին կը խօսինք հետեւեալ պրակում։ Կեդրոնական խաչի պալմիւեանները տեսնում ենք ասասանեան ամենահին դրամների վերայ։* Ահա մի այլ բեկոր գերեզմանական կոթողի, Եռաստիճան եւ ծակոտէին պատուանդանի վերայ ձողաբարձ խաչը հաւասարակող, բոլորակ պսակի մէջ առնուած, պսակի բոլորակի դարդի եռանկիւնաձեւերի շարքը, ինչպէս եւ ամբողջ շրջանակը, տեսնենք պիտի եւ Կողբի քանդակների մէջ, որ յետագայում այլեւս չի կրկնւում հայ քանդակագործութեան մէջ (Պատկ. 53)։ Արեւելեան լուսամուտի գլխին դրուած քանդակը, մի իշխանի եւ եպիսկոպոսի, ձեռքներին եկեղեցու մոդելը բռնած, կասկածելի ենք համարում, որպէս հին եկեղեցու մաս, եւ հաւանական ներկայ շէնքի հետ կապուած (Պատկ. 54)։

Պէտք է յիշենք նաեւ մի մոռիւ եւս, ձախ աւանդատան պատի մէջ դեռեղած, Ամենակալը աթոռի վերայ նստած, որ տարաբաղդաբար լուսանկարել չկարողացանք, տեղի նեղութեան եւ անյարմարութեան պատճառով, որ իւր նմանների մէջ հնագոյնը պիտի լինի, եթէ Օձունի արեւելեան լուսամուտի գլխի Յիսուսի քանդակը Ամենակալ չէ։

Ե.

Նախընթաց պրակի մէջ յիշեցինք Կողբի աւերակների մասին։ Նախ ճշդենք տեղը. այս վայրը չպէտք է շփոթել Արշարունեաց գաւառի ապահանքերին կից Նոյեանուն հին աւանի՝ Եղնիկ Կողբացու հայրենիքի հետ. սա գտնւում է Զորագետի աջ կողմը, Ղազախ եւ Լոռի գաւառների սահմանագծին մօտ, մօտաւորապէս Ախտալայի շրջանում, հնում Կողբափոր կոչուած։ Այդ երկրամասը հարուստ է հին եկեղեցիների մնացորդներով, բայց գիւղի հիւսիս-արեւելեան կողմը, գիւղացիներից մէկը իրեն պատկան հողի վերայ կամենալով կալ շինել, փորելիս երեւան է գալիս քանդակների մի բաղմութիւն եկեղեցու պատերի հետ։ Հայաստանի կառավարութիւնն խնդրն արգելում է շարունակել, իրը հնութեան վայր, ապագային թողնելով պեղումներ կատարել մասնագէտների ձեռքով։ Ուրեմն, եկեղեցու ձեւի մասին խօսել չենք կարող, թէեւ նշխարներից դատելով հնագոյն շէնքերից մէկը պիտի լինի, արտաքոյ կարգի հետաքրքրական, երեւան հանուած փշրանքների համեմատ։

Նախ յիշենք, որ այստեղ եւս կայ գերեզմանական կոթողի մի մնացորդ, ձեւով նման կեդրոնական Հայաստանի, յատկապէս Աբրագածի շուրջը երեւան եկած կոթողներին, որոնց մասին երկար պիտի խօսենք հետեւեալ պրակների մէջ։ Այս նշխարների փոքրիկ մնացորդներն իսկ բաւական են մատնանշելու, թէ այստեղ եղել է մի շէնք ասասանեան-միջագետական եւ բիւզանդական նախնական շրջանի հետ կապուած, ինչպէս եւ Օձունի, Բրդաձորի եւ Խժոռնիի մնացորդների, բայց նաեւ կեդրոնական Հայաստանի գերեզմանական կոթողների, իրենց չատ մոտիւներով (Պատկ. 55)։

Նախ քննենք (Պատկ. 56) աջից ձախ ա. բ. գ. բեկորները, որոնք թւում են գերեզմանական կոթողներ. գոցանից ա-ի ներքեւի մասից վեր՝ ոլորաստոյտ որթ է, ողկոյզի եւ տերեւի շարքով. որթի վերայ կանգնած է մի մարդ, ձախ ձեռքով ձողաբարձ խաչ բռնած, որ հաստատուած է վարդեակի մէջ։ Վերեւի տարածութիւնը կտրատուած է շեղակի գծերով քառանկիւնիների, իսկ ճակատին ասասանեան հասկաձեւ դարդ, որ Բրդաձորի եւ Խժոռնիի քանդակների մէջ եւս տեսանք։ Մօտաւոր նմանութեամբ մի քանդակ ունինք Լմբատավանքի վերայ՝ արեւելեան Շիրակում, որ ամենաուշը է. դարի սկզբների շէնք է։ այդ քանդակը ըստ Սարչիզովսկու մի հին շէնքի մնացորդ է,* որ գործադրուած է այստեղ իրը դրան վերին կողք, ասել է, թէ աւելի հին քան է. դարը. կողմնակի մի ապացոյց հնութեան։ Ուշադրու-

*Friedrich Sarre. Die Kunst des alten Persien. 1923. Taf. 142. No. 4 դրամը։

*Die Baukunst. 406.